

ԿՐՈՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ.
ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ուղուր Ումիթ Ունգոր¹

Ներածություն

Լարս վոն Տրիերի՝ կինոքննադատների բարձր գնահատականին արժանացած «Դոզվիլ» (2003) ֆիլմը սկսվում է նրանով, որ Գրեյս անունով մի կին (գլխավոր դերում՝ Նիքոլ Քիդման) գնում է 1930-ականների ամերիկյան Դոզվիլ գյուղը: Նա հայտարարում է, որ իրեն հետապնդում են, որպեսզի սպանեն, և տեղացիներից օգնություն է խնդրում: Գյուղաբնակները՝ պահպանողական գեղջուկների մի խումբ, փոքր-ինչ տատանվելուց հետո, այնուամենայնիվ, որոշում են պատսպարել նրան: Հետապնդողները կորցնում են Գրեյսի հետքն ու սկսում նրան փնտրել մեկ այլ տեղ: Գրեյսը որոշում է մնալ Դոզվիլում: Սկզբում փոքրիկ ծառայություններ է մատուցում գյուղացիներին՝ փորձելով ինտեգրվել տեղի մշակույթին և, թվում է, թե շատ գոհ է իր վիճակից: Սակայն կարճ ժամանակ անց գյուղացիներն աստիճանաբար սկսում են նրան վերաբերվել տիպիկ գեղջկական դաժանությամբ, և նրա վիճակը ծանրանում է: Աղջկան խաբում են, ահաբեկում, բռնաբարում, ծեծում, քարկոծում, շղթայում և, ի վերջո, զրկում ազատությունից՝ անասունի նման բանտարկելով ախոռում: Ֆիլմի վերջում, երբ աղջկան հետապնդողներն անսպասելիորեն հայտնվում են Դոզվիլում և պահանջում վերադարձնել Գրեյսին, նա արդեն վերածվել էր գյուղի հոգեպես ընկճված ստրուկի: Պարզվում է՝ Գրեյսն ազդեցիկ մաֆիայի ղեկավարի աղջիկ է: Հայրը հետ է պահանջում փախուստի մեջ գտնվող աղջկան: Գրեյսը, վրեժխնդրությունից ելնելով, հանձնվում է վայրի բնագոյների ազդե-

¹ Ազգությամբ թուրք Ումիթ Ունգորն աշխատում է Ամստերդամի համալսարանի պատմության ֆակուլտետի Հոլոքոստի և ցեղասպանության հետազոտությունների կենտրոնում: Հետազոտողը մեզ է տրամադրել իր հոդվածի անգլերեն տարբերակը: Նշենք, որ սույն հոդվածը 2008թ. տպագրվել է նաև Փարիզում՝ Claire Andrieu & Jacques Sémelin (eds), *Rescue Practices Facing Genocides. Comparative Perspectives* (Paris: Les Presses de Sciences Po, 2008): Հարկ ենք համարում ավելացնել, որ միշտ չէ, որ համաձայն ենք հոդվածի որոշ եզրակացությունների և շեշտադրումների հետ (*ibid.*):

ցությանը և խնդրում հորը ոչնչացնել գյուղը: Գանգատերն էրը հիմնահատակ ավերում են Դոզվիլը և վայրենաբար սպանում բոլոր բնակիչներին՝ նման ցնցող ավարտ տալով հիանալի ֆիլմին: Արդ, ո՞րն է «Դոզվիլի» գաղափարը: Ֆիլմը դիտելիս պարզ է դառնում, որ տառապյալ Գրեյսի ճակատագիրն Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում բազմաթիվ հայ կանանց հետ տեղի ունեցածի այլաբանությունն է. փրկությունը հաճախ դառնում է աղետի գուժկան: Հիմք ընդունելով սա՝ հողվածում կիսուենք փրկության, պատասպարման և կրոնափոխման հասկացությունների մասին 1915թ. Հայոց ցեղասպանության ընթացքում:

Անտոնի Գիդենսը մեզ հիշեցնում է, որ «20-րդ դարը արյունոտ է և սարսափազդու»¹: Օսմանյան կայսրությունն ու նրան հաջորդած Թուրքիայի Հանրապետությունն այս հարցում բացառություն չեն կազմել: Թուրք նացիոնալ-սոցիալիստական ապարատն օգտվում էր մարգինալացման, մեկուսացման, ազատագրկման, սահմանների փոփոխության, տարհանման, բռնի ձուլման, բնակչության տեղահանման, ընդհուպ մինչև բացահայտ կոտորածի և ցեղասպանության մեթոդների ընդարձակ համակարգից: Զոհերի ճակատագիրը կախված էր նոր հռչակված և խիստ իսլամականացված բնույթ ունեցող թուրք ազգային ինքնության նկատմամբ նրանց ունեցած էթնիկ և քաղաքական դիրքորոշումից, ինչպես նաև միջազգային քաղաքականության մեջ առկա այլ գործոններից: Էթնիկ պատկանելությունը համարժեք դարձավ լոյալությանը. այսպիսով՝ լոյալ քրիստոնյա հայ կառավարական պաշտոնյաները ենթակա էին նոր ազգային ինքնությունից դուրս դրվելուն, մինչդեռ հարկերից խուսափող թուրք, ալևի գյուղացիներն հայտնվեցին ինքնության այս նոր կարգում, որի սահմանները ժամանակ առ ժամանակ փոփոխվում էին: Չնայած հարցը միանշանակ չէ, համաձայն ոչեվգենիստական կրոնական սահմանման, այնպիսի ժողովուրդներ, ինչպիսիք են մուսուլման քրդերը, սեֆարդի հրեաները և նույնիսկ երբեմն քրիստոնյա հայերը, համարվում էին ավելի «*Turkifiabile*» («*eintürkfähig*») թուրքացման ենթակա, քան մյուսները²: Հիմնականում այս ամենն իրականացվում էր առանց հաշվի առնելու հռչակված և իրական լոյալությունը: Հետապնդումների սկսվելուց հետո այլևս անկարելի էր կանգնեցնել ընդամենը մի քանի տարում միլիոնավոր մարդկանց իրենց պապենական հողերից «մաքրելու» գործընթացը:

Հայոց ցեղասպանության ժամանակ հալածանքների ենթարկվող անհայտ քանակությամբ մարդիկ փրկվել են հալածանքի չենթարկվող մարդկանց

¹ Anthony Giddens, *The Nation-State and Violence* (Cambridge [etc.]: Polity Press, 1985), p.3.

² Բարը ծագում է գերմաներեն *Eindeutschung* եզրից, ինչը նշանակում է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ գերմանացման ենթակա ոչ գերմանացիների բռնի ուժացում: Նացիստ մտավորականներն ավելի ուշ ներմուծեցին *eindeutschfähig* հայեցակարգը, որի գրական թարգմանությունն է «գերմանացվող», որով ցույց էր տրվում, թե ինչքանով էին ոչ գերմանացիները ենթակա ուժացման ըստ ռասայական չափանիշների:

կողմից: Միություն և առաջադիմություն կուսակցության «ներքին թշնամիները» սահմանումները խիստ սահմանազատում մտցրին չափազանց բարդ օսմանյան հասարակության մեջ: Որոշ դեպքերում ընտանիքի անդամներն իրարից առանձնացվեցին. նրանց մի մասն արտաքսվեց երկրից, իսկ մյուսը՝ ոչ: Համենայնդեպս, ստեղծվեց մի իրավիճակ, երբ հալածանքների ենթարկվողները կարող էին փոխել իրենց սարսափելի ճակատագիրը միայն այն դեպքում, եթե հալածանքների չենթարկվողները (կամ սակավ հալածանքների ենթարկվողները) գաղտնի միջամտեին և ընդդիմանային հալածանքներին: Դա հիմնականում իրականացվում էր «փրկության» միջոցով (ձևակերպումը վերաբերում է մեր ժամանակներին). յուրաքանչյուր «գաղտնի կամ ոչ գաղտնի գործելակերպ՝ ուղղված ֆիզիկական կամ իրավաբանական առումով հետապնդվող անձի ինքնությունը թաքցնելուն և/կամ նրան առավել ապահով վայր փախչել օգնելուն»¹:

Պատերազմի ժամանակ քրիստոնյաներին փրկելու վերաբերյալ հետազոտությունները դեռ նախնական փուլում են: 1992թ. հրատարակված մի հոդվածում Ռիչարդ Հովհաննիսյանը նշում է, որ եթե չլինեին բազմաթիվ օսմանյան մուսուլմաններ, շատ հայեր չէին կարող փրկվել ցեղասպանությունից: Հիմնվելով վերապրածների վկայությունների վրա՝ նա պնդում է, որ այդ մարդկանց փրկողները հիմնականում առաջնորդվել են մարդասիրական և տնտեսական մղումներով: Փրկողները հիմնականում եղել են թուրք գյուղացիներ, որոնք մի քանի տարի պատսպարել են հետապնդվող հայերին: Հովհաննիսյանն ամփոփում է հոդվածը՝ նշելով, որ անհրաժեշտ է նաև հետազոտել հայերին փրկելու գործում ռիսկի գործոնի առկայության և բարոյականության երկվորյան խնդիրները²: Ռայմոնդ Գևորգյանը կատարել է ավելի համառոտ, սակայն նույնքան խորաթափանց մի վերլուծություն: Հայոց ցեղասպանության «բարեպաշտներին» (*«Righteous»*) նվիրված հոդվածում նա տարբերում է արևմտյան դերակատարներին օսմանյան քաղաքացիներից: Գևորգյանը շեշտում է փրկողի սոցիալական դիրքը նրա ընդունած որոշումների և գործողությունների հետ կապելու անհրաժեշտությունը: Նա նաև նշում է, որ փրկարարներն այդ քայլին դիմել են բազմաթիվ պատճառներից ելնելով: Այդ ընդհանուր սահմանումները տալուց հետո Գևորգյանն ավելի առաջ է գնում՝ խոսելով այն մի քանի օսմանյան պաշտոնյաների մասին, որոնք դեմ էին ցեղասպանությանը: Վերջապես, նա քննարկում է նաև փրկության վերաբերյալ առկա անորոշությունը և նշում,

¹ Jacques Semelin, «Rescue, Rescuer, Rescued: «Righteous among the Nations» and the Holocaust: European and comparative perspectives,» Call for Papers, 14 October 2004.

² Richard G. Hovannisian, «Intervention and Shades of Altruism during the Armenian Genocide», in: id. (ed.), *The Armenian Genocide: History, Politics, Ethics* (New York: St. Martin's Press, 1992), pp.173-207.

որ պետք է ավելի ուշադիր զննել օսմանյան արխիվային փաստաթղթերն ու փրկվածների վկայությունները¹: Վերջերս Ստամբուլում տեղի ունեցած գիտա-ժողովի ժամանակ Պողոս Լևոն Ջեքիյանը մի փաստաթուղթ է ներկայացրել, որտեղ ասվում է, որ ցեղասպանությունից հետո շատ փրկված հայեր հիացմունքով և հարգանքով էին հիշում իրենց փրկարարներին²:

Հայերի արտաքսման վերաբերյալ պատմությունը համեմված է նաև փրկության և կրոնափոխման վերաբերյալ հղումներով: Փրկության և կրոնափոխման մասին ուսումնասիրություններն ունեն օբյեկտիվ և սուբյեկտիվ մեկնաբանություններ: Մի կողմից՝ հնարավոր է ամենայն մանրամասնությամբ նկարագրել և բացատրել իրադարձությունների ընթացքը, թե ինչպես են տարբեր մարդիկ փրկվել տարբեր հանգամանքներում, ինչու են նրանք կրոնափոխ եղել և ինչ է տեղի ունեցել նրանց կրոնափոխությունից հետո: Սակայն, մյուս կողմից, պետք է նաև հաշվի առնել այն կարևորությունը, որ փրկվողներն ու փրկարարները տալիս են իրենց իսկ ստեղծած «սոցիալական գործոնին»³: Կրոնափոխների համար շատ կարևոր է հասկանալ, թե կրոնափոխությունն ինչ ազդեցություն է ունեցել իրենց նկարագրի և շրջապատի մարդկանց վերաբերմունքի վրա: Մրանք տարբեր (սակայն պարտադիր չէ, որ կոնֆլիկտային) մեկնաբանություններ են, որոնք կարող են հարստացնել մեր պատկերացումները Հայոց ցեղասպանության կարևոր դիտանկյունների վերաբերյալ:

Իսլամի ընդունումը փրկության հարցում միաժամանակ և՛ հետևանք էր, և՛ նախապայման: Միություն և առաջադիմություն կուսակցության դիկտատուրայի ճանկերից ազատվելու համար բազմաթիվ հայեր կրոնափոխության մեջ էին տեսնում իրենց փրկությունը: Կարելի է ճշգրտորեն ձևակերպել տասնյակ հարցեր և սահմանել այս գործընթացին վերաբերող նույնքան բնորոշ գծեր, սակայն մանրամասն նկարագրություններից բացի՝ ամենակարևոր հարցերից մեկն այն է, թե ինչպես տեղի ունեցավ փրկությունը: Անօգուտ է այն վերագրել միայն փրկարարների՝ բարի սամարացուն բնորոշ պարզությանն ու զգացմունքների մաքրությանը: Բացի այդ, վիճելի է նաև, թե արդյոք փրկարարների կրոնական ինքնությունն այնքան կարևոր է, որքան համարվում է՝ հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ շատ վերապրածների հիշողությունները հակառակն են վկայում, քանի որ շատ իսլամ հոգևորականներ ոչ միայն սաղրում, այլև ակտիվ մասնակցում էին կոտորածներին:

¹ Raymond H. Kévorkian, «Pour une typologie des «Justes» dans l'Empire ottoman face au génocide des Arméniens,» paper presented at the conference *Si può sempre dire un sì o un no: I Giusti contro i genocidi degli Armeni e degli Ebrei*, University of Padova, 30 November 2000.

² Boghos Levon Zekiyan, «The Conceptual Relationship Between «Tehcir» and «Genocide», with a special Reference to the Armenian Case, both from an Anthropological and a Legal Philosophical Viewpoint,» paper (work in progress) presented at the conference *New Approaches to Turkish-Armenian Relations*, Istanbul University, 17 March 2006.

³ «Սոցիալական գործոն» հասկացության մասին տե՛ս Steven Lukes (ed.), *From Emile Durkheim: The Rules of the Sociological Method* (New York: Free Press, 1982, trans. W.D. Halls), pp. 50-59.

Քաղաքական կոռեկտությունը որոշակիորեն «արգելակում» է նաև ստրկավաճառության մասին քննարկումները: Կարևոր չէ, թե որքան կարող են ցնցված լինել մարդիկ, այդ թվում և գիտնականները՝ կարդալով արտաքսվածների նկատմամբ դաժան վերաբերմունքի և ստրկության (հատկապես իզական սեռի) մասին, փաստը մնում է փաստ, որ այն երկար ժամանակ սովորական երևույթ էր Օսմանյան կայսրությունում¹: Մինչև 1970-ականները կարելի էր հանդիպել առանձին թշվառականների (սովորաբար որբեր կամ կանայք), ինչպես նաև շատ քրիստոնյա ընտանիքների, որոնք քրդական մեծ տնային տնտեսություններում զբաղեցնում էին ստրուկներին շատ մոտ սոցիալական դիրք: Դա ֆեոդալիզմի ընդունված և հասարակայնորեն ինստիտուցիոնալացված ձև էր, որը քրդերեն կոչվում էր *xulamî* (*khoolaam'ee*): Պետության՝ այս հարցին միջամտելու բոլոր փորձերը բախվում էին և՛ քուրդ տերերի, և՛ քրիստոնյա ենթակաների կոշտ դիմադրությանը: Նրանց համար դա *հիև ռեժիսի* ընդունված ձև ու պահպանման միջոց էր: Այսպիսով՝ 1915թ. ցեղասպանությունից հետո քուրդ ցեղապետերը ջանք չէին խնայում հայերի գտնվելու վայրը պարզելու համար, քանի որ հույս ունեին, որ հայերն իրար մեջ կկարողանան ամուսիններ գտնել և շարունակել էնդոգամիայի ավանդույթը: Ամեն դեպքում, միջերի և ազգայնական պատմագրության մեջ առկա հակասությունների վերհանման վրա զուր էներգիա վատնելու փոխարեն ստորև համառոտ կներկայացնենք կրոնափոխության բնական ընթացքը:

Կրոնափոխությունը Օսմանյան կայսրությունում. ընթացքը

Կրոնափոխության երևույթն Օսմանյան կայսրությունում երկար պատմություն ունի: Ոչ մուսուլման բնակչությանը բնակեցված ընդարձակ տարածքներում կրոնափոխությունը եղել է բավական բարդ խնդիր, որն ունեցել է տնտեսական, քաղաքական, անձնական, ինչպես նաև զուտ կրոնական նկատառումներ²: Շատ կրոնափոխ անձանց համար դա ավելի շուտ կարգավիճակ ձեռք բերելու միջոց էր, քան կրոնական համոզմունքի վրա հիմնված գիտակից որոշում, այլ խոսքերով՝ ավելի շուտ միջոց, քան նպատակ: Ակնհայտ է, որ կրոնափոխության հարցում կայսրությունում չկար որդեգրված կայուն քաղաքականություն: Օսմանյան կայսրության վերաբերյալ Սպերոս Վրիոնիսի խոսքերը թույլ են տալիս բնորոշել քաղաքականությունը միջազգային հարաբերություններում ընդհանրապես. «Երբ կենտրոնական ամուր իշխանություն ունեցող պետություններն անկում ապրեցին կամ թուլացան, և երբ նրանք վտանգ

¹ Ehud R. Toledano, *Slavery and abolition in the Ottoman Middle East* (Seattle [etc.]: University of Washington Press, 1998); Y. Hakan Erdem, *Slavery in the Ottoman empire and its demise, 1800-1909* (Basingstoke [etc.]: Macmillan, 1996).

² Speros Vryonis, *The decline of medieval Hellenism in Asia Minor and the process of Islamization from the eleventh through the fifteenth century* (Berkeley [etc.]: University of California Press, 1971).

զգացին քրիստոնեության իրական կամ պոտենցիալ ուժից (արտաքնապես կամ ներքուստ), ոչ մուսուլմանների իրավական կարգավիճակն ու պաշտպանությունն ինչ-որ չափով թուլացան»¹:

Դատելով պատմական անցյալի այս հենքից՝ 1915թ. ողջ հայկական *միլլեթի* արտաքսումն ու հետապնդումը Օսմանյան պետության ղեկավարման և քաղաքական մշակույթի նշանակալի ու խոշորագույն ճյուղերը մեկն է կազմել: Ողջ հայկական *միլլեթի* արտաքսումը պաշտոնապես սկսվել է 1915թ. մայիսի 23-ից, երբ Թալեաթը հրաման արձակեց հայության արտաքսման մասին դեպի Դեյր Էլ Զոր՝ սկսած հյուսիսարևելյան գավառներից²:

Նույն օրը նա կարգադրեց Չորրորդ բանակի հրամանատարությանը ռազմական տրիբունալի առջև կանգնեցնել ցանկացած քրիստոնյայի հետ համագործակցող յուրաքանչյուր մուսուլմանի³: Երրորդ բանակը գեներալ Մահմուդ Քամիլ փաշայի հրամանատարության տակ էր: Նա նույնպես հրաման էր արձակել, ըստ որի՝ «հայերին պաշտպանող յուրաքանչյուր մուսուլման կախադան կբարձրացվի իր իսկ տան առջև, կայրեն նրա տունը, նա կհեռացվի աշխատանքից և կկանգնի ռազմական տրիբունալի առջև»⁴: Այդ պահից սկսած՝ հետապնդման գործընթացը վերածվեց պաշտոնական քաղաքականության, և լուրջ քայլեր ձեռնարկվեցին օսմանյան հայերին թիրախի վերածելու համար:

Միևնույն ժամանակ, բռնի կրոնափոխությունը նույնպես ոչօսմանյան արարք էր: Խնդրին վերաբերող հողվածում Արա Սարաֆյանը բնութագրում է կրոնափոխությունների չորս հիմնական տարբերակներ⁵.

1. Անհատների «կամավոր»⁶ կրոնափոխություն 1915թ. հետապնդումների նախնական փուլում:
2. Անհատ մուսուլմանների կողմից առանձին հայերի ընտրություն՝ նրանց մուսուլմանական ընտանիքներում ինտեգրելու համար:

¹ *Speros Vryonis*, «The Experience of Christians under Seljuk and Ottoman Domination, Eleventh to Sixteenth Century», in: Michael Gervers and Jibran Bikhazi (eds.), *Conversion and Continuity: Indigenous Christian Communities in Islamic Lands* (Toronto: Pontifical Institute of Medieval Studies, 1990), pp. 185-216.

² *Թուրքիայի կառավարությանն առնիթեր օսմանյան արխիվ* - Ottoman Archives, Istanbul, DH.ŞFR 53/91, 53/92, և 53/93, Թալեաթը գավառներին, 23 May 1915. Սա եզակի օրինակ է, որում դրսևորվում է արտրի համակայսերական բնույթը՝ ամենաբարձր մակարդակով տրված մեկ հրամանով:

³ *BOA (օսմանյան արխիվ)*, DH.ŞFR 53/85, Թալեաթը Ջեմալ փաշային, 23 May 1915.

⁴ *Takvim-i Vekâyi*, no.3540, p. 7.

⁵ *Ara Sarafian*, «The Absorption of Armenian Women and Children into Muslim Households as a Structural Component of the Armenian Genocide», in: Omer Bartov and Phyllis Mack (eds), *In God's Name: Genocide and Religion in the Twentieth Century* (Oxford: Oxford University Press, 2001), pp. 209-21.

⁶ Կրոնափոխության պատմության մեջ «կամավորությունը» չափազանց վիճելի հայեցակետ է, քանի որ «կամավոր» կերպով կրոնափոխված մարդկանց մեծ մասը միշտ էլ որոշակի ճնշման է ենթարկվել, չնայած ավելի շատ հասարակական, քան վարչական: *Maria Todorova*, «The Ottoman Legacy in the Balkans», in: Carl Brown (ed.), *Imperial Legacy: The Ottoman Imprint on the Balkans and the Middle East* (New York: Columbia University Press, 1996), p. 45-77, at p. 49.

3. Կառավարական գործակալությունների կողմից հայերի տեղաբաշխում մուսուլմանական ընտանիքներում:
4. Հայ երեխաների ուժացում կառավարության հովանու տակ գտնվող որբանոցների միջոցով: Ուստի, շատ հայ երեխաներ ենթարկվել են քիչ թե շատ բռնի կրոնափոխության¹:

Անկախ հետապնդման գործընթացի կարգատեսակից, այս ռազմավարությունները վկայում են թիրախ-խմբի կենսաբանական-ռասայական բնորոշման բացակայության մասին: Արտաքսման երևույթը նույնպես վկայում է, որ օսմանյան հայերի խմբի ինքնությունը կարող էր աղավաղվել՝ աստիճանաբար վերածվելով մեկ այլ ինքնության: Բնչպես գրում է Մաթիաս Բժորնլունդը, «Միայն կրոնը չէր, որ պետք էր պաշտոնապես փոխել դաժան և սիստեմատիկ ճնշումների ներքո: Այդ ճակատագրին պետք է արժանանային նաև հայոց լեզուն, մշակույթը, նույնիսկ վերապրողների անձնանունները՝ թե՛ սեփական տներում, թե՛ կառավարության հովանու ներքո գտնվող որբանոցներում և թե՛ հասարակական ոլորտում՝ թողնելով միայն պարբերական թուրքացման պատրաստ կենսաբանական «հում նյութը»²:

Կրոնափոխության հարցերով զբաղվում էր ներքին գործերի նախարարությունը, ավելի կոնկրետ ինքը՝ Թալեաթ փաշան, որի քարտուղար Ֆայիհ Ռեֆքըն իր հուշերում նշում է, որ Միություն և առաջադիմություն կուսակցությունը հիմնել էր հայերին զանգվածային կրոնափոխության հարկադրող կոմիտե: Կոմիտեն մի քանի անգամ նիստ է հրավիրել իր տանը և նույնիսկ քննարկել այն հարցը, որ կրոնափոխ լինելու դեպքում հայերին կտրամադրվեն հողատարածքներ, սակայն այս միտքը շատ արագ մերժվել է³:

Եվրոպական Ստամբուլի օսմանյան արխիվներում պահվող Թալեաթի հեռագրերը բացում են այդ գործընթացի ամենօրյա պատմության կարևոր և հետաքրքիր մի էջ. դրանք հրամաններ են, որոնցով նա արտոնում էր հայերի կրոնափոխությունը: Կառավարիչներին ուղղված հատուկ հրահանգներից գատ, Թալեաթն արձակեց նաև համազգային «ընդգրկմամբ» հրամանագրեր, որոնցում կային հետապնդման և արտաքսման ենթակա անձանց կարգի բնորոշումներ: 1915թ. հունիսին նա իսլամ ընդունած կրոնափոխ հայերին չարտաքսեց հարավ⁴: Կրոնափոխ եղածների մեծ մասը հետապնդման էլ չէին ենթարկվում, և նրանց թույլ էին տալիս շարունակել ապրել իրենց տներում,

¹ Տե՛ս նաև *Yavuz Selim Karakışla*, «Savaş Yetimleri ve Kimsesiz Çocuklar: «Ermeni» mi, «Türk» mü?», in: *Toplumsal Tarih*, vol.XII, no.69 (1999), pp. 46-55.

² *Matthias Bjørnlund*, «A fate worse than dying»: sexual violence during the Armenian genocide» (unpublished manuscript, 2006), p. 18.

³ *Falih Rifki Atay*, *Zeytindağı* (Istanbul: Bates, 1981), p. 66.

⁴ *BOA*, DH.ŞFR 54/100, Թալեաթի՝ զավանդներին, 22 June 1915.

լռության քողի ներքո: Երկու շաբաթ անց Թալեաթը կրկին կրոնափոխներին ընդգրկեց արտաքսման ծրագրի մեջ: Նրա հրամանում ասվում էր, որ «որոշ հայեր կրոնափոխ են լինում խմբերով կամ անհատապես, որպեսզի միայն մնան իրենց հայրենի քաղաքներում» և որ «նմանատիպ կրոնափոխությանը չի կարելի հավատ ընծայել»: Թալեաթը համարում էր, որ «երբ նման մարդիկ սպառնալիք զգան իրենց շահերի հանդեպ, լոկ արտաքուստ կրոնափոխ կլինեն»¹: Այլ խոսքերով՝ այդ ժամանակահատվածում Միություն և առաջադիմություն կուսակցության դիկտատուրան իսլամի ընդունումը բավարար և բավականաչափ վստահելի չէր համարում: Այդ իսկ պատճառով 1916թ. փետրվարի 22-ին Թալեաթն արձակեց համակայսերական հրամանագիր կրոնափոխ հայերին ինքնությունը հաստատող նոր փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ՝ նրանց ավելի խիստ վերահսկողության տակ պահելու նպատակով²: Ավելի ուշ նա շարունակում էր ճնշել կրոնափոխ հայերին և ասորիներին՝ ցուցակագրելով նրանց անունները, ճշտելով կրոնափոխ լինելու ձևերը և գրանցելով կրոնափոխ լինելուց հետո նրանց ձեռնարկած գործողությունները³:

Կառավարության կրոնափոխության քաղաքականության նկատմամբ հայերի արձագանքը երկակի էր՝ լուռ, վախվորած համաձայնությունից մինչև անդրդվելի դիմադրություն: Երիտասարդ աքսորյալ Քերոփ Բեդուկյանն իր հուշերում պատմում է. «Մայրս պատմում էր, որ քաղաքապետը մեզ մի առաջարկ է արել իմ հորաքրոջ միջոցով, որը քաղաքում հիմնել էր առաջին վեց թուրքական մանկապարտեզները: Ըստ այդ առաջարկի՝ հորաքույրս և նրա քառասուններկու ազգականները չէին արտաքսվի, եթե կրոնափոխվեին: Իմ հոր պատասխանը դեռևս զնգում է ականջներինս մեջ, որը նա ասաց իմ գոտին կապելիս. «Դուք կզնաք ու կմեռնեք մի սարի վրա, իսկ ես էլ՝ մեկ ուրիշի, բայց մենք երբեք չենք հրաժարվի մեր Քրիստոսից»: Ես դեռևս զգում եմ նրա հրաժեշտի համբույրը իմ այտերին: Մենք բաժանվեցինք: Ոչ մեկը արցունք չթափեց»⁴:

Կրոնափոխության դեմ այս դիմադրությունը շատ բնորոշ է և հատկանշական այդ ժամանակահատվածի ու տարածաշրջանի համար: Նշանակություն չունի, թե Արևելյան Անատոլիայի⁵ գյուղական հասարակությունը որքանով էր (և է) հեղհեղուկ ու խառնածին, բայց պահպանվել էր աղանդավորական ինքնության մի որոշակի տիպ, հատկապես ազգայնականների և առավել կրոնապաշտ մարդկանց մեջ: Սեփական ինքնությունից հրաժարվելն անըն-

¹ BOA, DH.ŞFR 54/254, Թալեաթը՝ գավառներին, 1 July 1915.

² BOA, DH.ŞFR 61/71, Թալեաթը՝ գավառներին, 22 February 1916.

³ BOA, DH.ŞFR 86/45, Թալեաթը՝ գավառներին, 3 April 1918; BOA, DH.ŞFR 87/259, Directorate for General Security to Elaziz province, 23 May 1918.

⁴ Kerop Bedoukian, *The Urchin: An Armenian's Escape* (London: John Murray, 1978), p. 8.

⁵ Հարկ ենք համարում շեշտել, որ մեզ համար բացարձակ անընդունելի է քաղաքական ենթատեքստ ունեցող «արևելյան Անատոլիա» աշխարհագրական եզրը, որով նկատի է առնվում Արևմտյան Հայաստանը (*իսլթ.*)

դունելի ու ստորացուցիչ էր նրանցից շատերի համար: Արտաքսման ժամանակ Ավրորա Մարդիգանյանն առնանգվել է քրդական ցեղախմբի անդամներից մեկի կողմից: Այդ մարդու համար երկու երեխա ունենալու փաստը չափազանց ամոթալի էր, որպեսզի նա դրա մասին մանրամասն պատմեր իր հուշերում¹: Անվան հարկադիր փոփոխությունը նույնպես ստորացուցիչ և ամոթալի էր: Խաչատուր Փիլիպոսյանը երեխա է եղել, երբ փրկվել է Հայոց ցեղասպանությունից: Արտաքսման ժամանակ նրան նույնպես առնանգել է մի քուրդ և տարել, որպեսզի իր հետ ապրի որպես ստրուկ: Իր հուշերում նա պատմում է, թե ինչպես է մուտք գործել քրդական ընտանիք, և որ քրդերը նրան Մուսթաֆա էին կոչում: Պատերազմից հետո նա կարողացել է փախչել Հալեպ և կապվել Ամերիկայում բնակվող իր հոր հետ: 1920թ. հասնելով Ամերիկա՝ նա իր սեփական բիզնեսն է բացել Մասաչուսեթսում²:

Ահա այստեղ է, որ սուբյեկտիվ փորձը բախվում է օբյեկտիվ դիտարկումների հետ. չնայած արտաքսյալների մեծ մասի համար կրոնափոխությունը բարոյական ու հասարակական օրենսգրքի չափազանց լուրջ խախտում էր, սակայն փաստը մնում է փաստ, որ նրանց համար ողջ մնալու ամենամեծ հավանականությունն իսլամ ընդունելն ու ինչ-որ քրդական ցեղախմբի տիրապետության տակ աննկատ ապրելն էր: Մակայն 1915թ. հետո Թալեաթ փաշայի վերաբերմունքը կրոնափոխների նկատմամբ վկայում էր, որ կրոնափոխությունը չէր փարատել Միություն և առաջադիմություն կուսակցության կասկածները: Հավանաբար, դա արդարացված էր, քանի որ կրոնափոխությունը չէր երաշխավորում պետության նկատմամբ լոյալությունը: Որքան էլ տարօրինակ հնչի, չնայած Միություն և առաջադիմություն կուսակցությունը շատ քրիստոնյաների ստիպում էր կրոնափոխ լինել (լինեին հայեր, թե ասորիներ), նա այնքան խորաթափանց չէր, որ հաշվի առներ, որ (հավանաբար, որովհետև դա միայն ուժեղացնում էր գաղտնիության և միջականացման գաղափարը), ինչպես նշում է Արենալը, «բռնի կրոնափոխության դեպքում իշխող հասարակությունը սովորաբար ավելի վատ ու անվստահությամբ է վերաբերվում կրոնափոխ խմբին»³: Հետևաբար, կրոնափոխության ենթարկվածների մեջ ակնհայտ է բավական տրավմատիկ ինքնության խնդիրների առկայությունը, ինչը «ոչ իսլամական ծագումը» և այստեղից՝ ինքնավստահության բացակայությունը քողարկելու համար հաճախ մատնանշում է «հավասարակշռող (կոմպենսացնող) բարեպաշտությունը»: Վանում մեծացած մի քուրդ քաղաքական գործիչ, որը հայ տատ ուներ, երբեք չէր հասկանում, թե

¹ *Aurora Mardigian*, *The Auction of Souls* (London: Phoenix Press, 1934), p. 185.

² *Khachador Pilibosian*, *They Called Me Mustafa: Memoir of an Immigrant* (Watertown, NY: Ohan Press, 1992).

³ *Mercedes Garcia Arenal*, "Conversion to Islam in the Mediterranean-Muslim World," in: Randi Deguilhem (ed.), *Individual and Society in the Mediterranean-Muslim World: Issues and Sources* (Paris: European Science Foundation, 1998), p. 15.

ինչու մռայլ և ընկճված կինը միշտ իր սեփական ընտանիքն անիծելիս նրանց անվանում էր «քուրդ սրիկաներ»¹: Մի նահանգի օրինակով այս իրադարձությունների առավել ուշադիր ուսումնասիրությունը կարող է լուսաբանել այդ համալիր ընդգրկում ունեցող երևույթը:

«Վարքագծային փախուստ» Դիարբեքիրի նահանգում

Ներերթնիկ և ներկրոնական հարաբերությունները Դիարբեքիրում 1914թ. նախորդող տարիներին այնքան էլ իդեալական չէին, ինչպես ներկայացնում էին որոշ դիտորդներ: Իրականում դրանք Օսմանյան կայսրության ստեղծած երկարատև ճգնաժամի արդյունքում դարձել էին շատ դյուրաբեկ: Բալկաններից օսմանյան իշխանության աստիճանական վտարումն ուղեկցվում էր օսմանյան մուսուլմանների նկատմամբ իրականացված սպանողական այնպիսի վայրերում, ինչպիսին է, օրինակ, Կրետե կղզին², ինչը բարձրացրեց օսմանյան պետության քրիստոնյա քաղաքացիների լոյալության հարցը: Աբդուլ Համիդի տիրապետության ժամանակ իրականացված կոտորածները, որոնցից, օրինակ, 1895թ. նոյեմբերի 1-ինը, զերծ չմնաց Դիարբեքիրը, հսկայական չափեր ընդունեցին³: Ողջ Դիարբեքիրի նահանգով մեկ մոտ 25.000 հայեր ենթարկվեցին բռնի կրոնափոխության, 1100 հայեր սպանվեցին Դիարբեքիր քաղաքում և 800-900 հայեր՝ շրջակա գյուղերում, մոտ 155 կանայք և աղջիկներ առևանգվեցին քրդերի կողմից: Միլվանի շրջանում կրոնափոխվեց 7000 հայ, առևանգվեց 500 կին: Բալուում կրոնափոխ եղավ 3000 հայ, Միվերեքում 2500 մարդ կրոնափոխ եղավ սպանողից խուսափելու համար: Միլվանում, ինչպես նաև Բալուում, 7500 մարդ դարձավ չքավոր, 4000 մարդ անհետացավ. սպանվեց, մահացավ ցրտից կամ ինչ-որ տեղ փախավ⁴: Համաձայն Գևորգյանի և Փաբուջյանի, 1985թ. սպանողի ժամանակ նահանգում հրի մատնվեցին 2000 տներ և 2500 խանութներ ու արհեստանոցներ⁵: Հետապնդման դադարումից անմիջապես հետո կրոնափոխ եղածների որոշ մասը վերադարձավ իր հավատքին ու իրենց գյուղերը, հետ պահանջեցին իրենց ունեցվածքը, վերստին տներ կառուցեցին ու գործ սկսեցին:

Այսպիսով՝ շատ հայերի համար ցեղասպանությունը ևս մեկ օսմանյան սպանող էր: Ցեղասպանական արտաքսումների սկսելուց հետո նրանք քիչ բան

¹ Հարցազրույց Բ.Յ.-ի հետ, հուլիս 12, 2004, Ստամբուլ:

² Justin McCarthy, *Death and exile: The ethnic cleansing of Ottoman Muslims, 1821-1922* (Princeton, NJ: The Darwin Press, 1995).

³ Gustave Meyrier, *Les Massacres de Diarbekir: Correspondance diplomatique du Vice-Consul de France 1894-1896* (Paris: L'Inventaire, 2000).

⁴ *Blue Book Turkey*, No.8 (1896), enclosure in document no.140, p.127.

⁵ Raymond H. Kévorkian & Paul B. Paboudjian, *Les Arméniens dans l'Empire ottoman à la veille du génocide* (Paris: Editions d'Art et d'Histoire, 1992), p. 398.

գիտեին դրանց իրական բնույթի մասին: Սակայն, ի տարբերություն ֆաշիստական ու Ռուսոդայի ծայրահեղ էթնիկ ցեղասպանությունների, Հայոց ցեղասպանությունն ուներ «վարքագծային փախուստի» սահմանափակ, սակայն իրական հնարավորություններ: Փախուստի կամ փրկվելու հավանականությունը սերտորեն կապված էր կրոնափոխության հետ, չնայած առանց օգնության (միայն մուսուլմանների կողմից) այս հնարավորությունները չափազանց աննշան էին, մինչև իսկ զրոյական: Էրզրանիի մի տարեց քուրդ պատմում էր, որ հայրն իրեն փոխանցել է մի հայի մասին պատմություն, որն իսլամ ընդունելուց հետո պատսպարվել էր բարյացակամ գյուղացիների ախոռներից մեկում: Երբ 1915թ. ամառվա ամենաարյունոտ ամիսներն անցել են, նա վերընդունել է քրիստոնեություն, սակայն նրան գտել ու սպանել են¹: Դիարբեքիի հյուսիսից իրավաբան Ֆեթիյե Չեթինի (մուսուլման ընտանիքից) դեպքը ևս ուսուցողական է: Իր տատի հայկական արմատների մասին նրա գրած հուշերը կրոնափոխության, փրկության և վերապրելու դասագրքային օրինակ են: Չեթինը նշում է, որ իր տատը փրկվել է, քանի որ ընդունել է իսլամ: Մուսուլման գյուղացիները հետաքրքրված էին պատսպարելու այն հայ երեխաներին, որոնք կամ արդեն կրոնափոխ էին եղել, կամ էլ ցանկանում էին կրոնափոխվել²: Ավելի ուշ տված հարցազրույցում Չեթինը նշել է, որ նա ապրում է թուրքական, քրդական և հայկական ինքնության անորոշ գոտում՝ էթնիկ և ազգային պատկանելության սահմաններում: Նա նաև հիշում է, որ իր արմատները պարզելուց հետո է միայն հասկացել, թե ինչու էր տատը զարնանը հատուկ քաղցր հաց թխում ընտանիքին անձանոթ կանանց համար. դրանք ցեղասպանությունից փրկված կանայք էին, որոնք գատիկն էին տոնում³:

Ցեղասպանության հետապնդումներից փրկված և գոյատևելու համար իսլամ ընդունած հայերի հետագա կյանքը, որոնք իրոք կարողացան Դիարբեքիում ապրել մի քանի տասնամյակ, նախքան Դիարբեքի քաղաք, Ստամբուլ կամ Արևմտյան Եվրոպա գաղթելը, ուշագրավ է ոչ միայն զուտ ցեղասպանությունն ուսումնասիրելու տեսանկյունից⁴: Այս մարդկանց գոյությունը նաև կարևոր է եղել Արևելյան Անատոլիայի հետպատերազմյան պատմության և տնտեսության համար: Որոշ կրոնափոխ հայեր մնացին իրենց գյուղերում և մոռացության մատնեցին իրենց հայկական անցյալը, մինչդեռ մյուսներն ապրում էին որպես ծպտյալ քրիստոնյաներ: Ինչպես նշեց մի քրդահայ կրոնափոխ, «Ես միշտ գիտեի, որ իմ հոր հայրը հայ էր: Մենք բոլորս գիտեինք, բայց չէինք խոսում այդ մասին: Բոլորը գիտեին, և շատ մարդիկ իմ պապին ասում

¹ Քրդերենով արված հարցազրույց Մ.Շ.-ի հետ Դիարբեքի քաղաքում, օգոստոս, 2004:

² *Fethiye Çetin*, *Anneannem* (Istanbul: Metis, 2004).

³ http://www.frederike.nl/cgi-bin/scripts/db.cgi?&ID=403&ww=1&view_records=1

⁴ Ամատերդամում հոլանդերենով արված հարցազրույց մի անանուն հայ ընտանիքի հետ (Լիջե գավառ), փետրվար 2003:

էին, որ նա ծագումով հայ է, բայց ընտանիքում մենք այդ մասին չէինք խոսում: Բմ հորեղբայրները մոլի մուսուլմաններ են, նրանց մեջ կան կրոնավոր պաշտոնյաներ՝ իմամներ, դրա համար մենք այդ մասին չենք խոսում»¹:

Մերջանյանների նշանավոր հայկական ընտանիքը (այժմ՝ Մերջան) այս «երկակի» ռազմավարության հիանալի օրինակ է: Ցեղասպանության ժամանակ Մերջանյանների ընտանիքը փրկվել է կրոնափոխության միջոցով: Երբ 1970-ականներին նրանք Դիարբեքիից գաղթեցին Ամստերդամ, անմիջապես վերադարձան քրիստոնեության: Այսօր, երբ նրանք այցելում են Դիարբեքիում մնացած իրենց ազգականներին, Եվրոպա-Թուրքիա թռիչքի ժամանակ կարելի է ականատես լինել մի կրոնից մյուսին անցման յուրահատուկ դրսևորման. կանայք արդեն ինքնաթիռում գլուխները ծածկում են գլխաշորով, հայկական անունների փոխարեն օգտագործվում են մուսուլմանական անունները, և Դիարբեքիում էլ իրենց պահում են մուսուլմանների պես²: Այս մի քանի մարդիկ ցեղասպանությունից փրկվեցին իրար շաղկապված կրոնափոխության և փրկության համակցության շնորհիվ:

Վերջաբան

Հողվածում փորձում եմ ցույց տալ, որ փրկության շատ դեպքեր հնարավոր դարձան կրոնափոխության միջոցով, և դա էլ պայմանավորված էր ավելի շատ հասարակությանն ինտեգրվելու պարտադիր պայմանով, քան անհատների այլասիրությամբ: Ինքնության պատճառով հետապնդումների (ի հակադրություն ըստ ռասայական պատկանելության հետապնդումների) գործընթացը, ունենալով «ծակոտկեն» բնույթ, թույլ տվեց, որ շատ հայեր փրկվեն: Շատ ավելի մեծ աշխատանք պետք է կատարվի հետևյալ ոլորտներում. ի՞նչ էր կրոնափոխությունը հենց կրոնափոխների համար, ինչպիսի՞ ճնշումների են նրանք ենթարկվել իրենց փրկիչների կողմից, ինչո՞վ էր Հայոց ցեղասպանության ժամանակ առկա ստրկությունը տարբերվում օսմանյան «սովորական» ստրկությունից: Այն, որ այդ ստրուկները հիմնականում դժվար կացության մեջ հայտնված հայեր էին, թվում է՝ չէր մտահոգում բազմաթիվ մուսուլմանների, որոնք մեծ եկամուտներ էին ստանում այդ «գործարքներից»: Մյուս խնդիրը ներկայումս Թուրքիայում գոյություն ունեցող ծպտյալ հայերն են: Ե՛վ հայ, և՛ թուրք ազգայնականները մրցում են բնակչության այս շերտի լոյալության համար: Այնինչ, ի պատասխան «նրանց իսլամից արթնացնելու» և նիրհող հայկական ինքնությանը վերադարձնելու երազանք-կոչերի, վերջիններս հայտարարել են, որ էթե ցանկանան «վերադառնալ» հայկական արմատներին, նրանց ներկայությունն այլևս ցանկալի չի լինի Թուրքիայում: Մենք, ըստ էության, վերադառնում ենք 1914թ. դրությանը:

¹ Liana Sayadyan, «A Wound That Wouldn't Heal», *Hetq Online: Investigative Journalists of Armenia*, available at: <<http://hetq.am/eng/society/0603-gender.html>>

² Ամստերդամում թուրքերենով արված հարցազրույց Դ.Ե.-ի հետ (Պիրան/Դիջլե գավառ), մայիս 2005: